11. ՍԸԵՐՏԸ ՔԱՐ ՄՐԱՔՈՒՐԸ

Մին քանե դար ըստրանա առաջ մին քղաքու թաքավեր ուղիս ա, վեր մին կարմունջ շինի։ Էրկու հետ էտ կարմունջը շինիս ա, լհա՜ վեր կյաս ա, թա պրծնելավ տրեռնա, պարան ա կյաս։

Իրեքինջի դոնումը շինիս տեղը մին դարվիշ ա կյաս, թա հըղրցավը անց կենա, էտ թաքավերը փոնես ա ըտրան, թա.— Ա՛սե, տրեսնամ, շինած կարմունջս խե՞ յա պարան կյաս, հո՞ւնց անիմ, վեր իրեքինջի դոնումն էլ չի պարան կյա։

Էտ դարվիշը ասես ա.— Կարմունջը վեր շինիս, հա՜լա՜ կըեսըմը պատը քշիս տեղը մին ա՜ղա՜փ ախճիգյ կտնիս պատըմը, հեմնիս, պարան չի կյլական։

Թաքավերը ըտրան լա՜վ պադեվ ա ընես, հղե տնիս։

Ըրուգյունը կյաս ա, ինքյը ուրա՜ն ասես. «Ինձ հո՞ւ ախճիգյ կտա, թա՝ տար պատըմը տիր»։ Ինքյը-ինքյը մտծելան ետը, ասես ա. «Պիրիմ մին ժողով անիմ, տրեսնամ ժողովուրթը հի՞նչ կասե»։

Պիրիս ա ուրա՜ն երգյիրեն ժողովուրթը հվըքես, լոխ պըտմես, ետնան ասես.— Հու վեր ինձ մին ա՜ղա՜փ ախճիգյ տա, մին կարաս վրեսկե յըմ տլական ընդրան։

Էն վախտը քղաքումը մին շատ ղա՜շանգյ ախճիգյ ա ինիս։ Տա եթիմ ա ինիս, ըտրան պհես ա ինիս ուրա՜ն մրաքուրը։

Էտ վեր թաքավերեն խոսկը ըսկընաս ա, ինքյը ուրա՜ն ասես ա. — Բոլ ա հիշքան պահալ ըմ իմ քվոր եթիմը, տանիմ տամ թաքա-

վերեն, համ ուրան պենը ամալ կըկյա, համ էլ յրես կըհրուստանամ։ Բոլ ա հիշքան քյասիբ ըմ կացալ։

Էքսը քվորը ախճիգյը յոր ա օնես, անես տաս թաքավերեն, վրեսկեն յոր օնես, կյաս։

Թաքավերը էտ ըխճըկանը տինիս ա պատըմը։ Ըսկսես ըն պատը հեմնել տալը։ Վեր միչև էտ ըխճըկանը ծոյները հիմնիս ըն, ըտրա մրաքուրը կյաս ա, թա տեսնա հունց ըն ընես, էտ ախճիգյը, վեր տսնաս ա ուրան մրաքվերը, ըսես ա.—Ա՛ մրաքուր, ա՛ մրաքուր շըրեցեն, միչև ծոյներս քըրեցեն, խղճա ինձ, ըզագե եթիմիտ։

Մրաքուրը ըսես ա.— Վեչինչ բալա՛, թող շարի՛ն, միչև ծոյներտ թող քարի՛ն, աստված էնքան էլ անխեղճ չի, եթիմներին կըզագե։

Էտ ախճիգյը սուս ա ընես, միչև կլոխը հիմնես ըն։ Մրաքուրը մին էլ ա կյաս, տրեսնա։ Էտ ախճիգյը, վեր մըրաքվերը տսնաս ա, ըսես ա.— Ա՛ մրաքուր, ա՛ մրաքուր, շրեցեն, միչև կլոխս քրեցեն, օրիշ պեն չըմ ըսես քյրեզ, մինակ, հիբը պատը պրծնին, քաշ տեռնաս, կյաս, վեզրտ գբի ինձ մեկնես, ղաչանք անես, յրես էլ տրեսնամ դինշ նի մընիմ կյրեզման։

Պատը, վեր հիմնիս ըն, պրծնես, կարմունշը էլ պարան չի կյաս։ Էրկու օրանը ետը, վեր թաքավերը ուղիս ա թա ղոնախլըղ սարքե, ուրխոթուն անե, վեր կարմունշը պրծալ ա, սաղ սըլըմաթ, մարթ ա ղրկես, թա.— Քյեցեքյ էն ըխճկանը մըրաքվերն էլ ըսեցեքյ կյա։

Քյնիս ըն, թա ասին, տսնաս ըն մրաքուրը քաշ տրեռած, թուչից, քյեցավ կրմունշեն պատեն վեր եկավ, սկսից կըրկռալը։ Են վխտան միչև մհենգյ էլ, քաշերը հիշտեղ վրեն ըն կնաս, վրզրնեն ըրկընցընես ըն, ետնան կոկռաս։